ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

N Ե-1461/24
15 հոկտեմբերի 2024թ.

«ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Գ. ՌՈՒԲԵՆՅԱՆԻՆ

Ծանուցում
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Ռուբենյան

Հայտնում եմ, որ Բյուրեղավանի համայնքապետարանի և «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի մարտի 15-ին կնքված N ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-24/12 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում ընկերությունը պետք է իրականացներ Բյուրեղավան համայնքի ոռոգման ցանցի վերանորոգման և կառուցման աշխատանքներ (այսուհետ՝ Աշխատանքներ)՝ 2024 թվականի ապրիլի 01-ից 110 օրացույցային օրվա ընթացքում: Ըստ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագրի (կցվում է)՝ ընկերությունը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ պայմանագրով սահմանված ժամկետում ընկերությունը չի կատարել Բյուրեղավան համայնքի ոռոգման ցանցի վերանորոգման և կառուցման աշխատանքները: Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4-րդ կետի «բ» պարբերությունը՝ Բյուրեղավանի համայնքապետարանը միակողմանի լուծում է N ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-24/12 ծածկագրով պայմանագիրն ամբողջությամբ:

Տեղեկացնում եմ, որ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումն ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Բյուրեղավանի համայնքապետարանի գանձապետական

900102001014 հաշվեհամարին փոխանցելով 479400 (չորս հարյուր յոթանասունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2-րդ կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 25.09.2024թ. (աշխատանքի կատարման ուշացում 47 աշխատանքային օր): «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը: Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում վճարման ենթակա՝ պայմանագրի որակավորման ապահովման գումարը կազմում է 4601058 (չորս միլիոն վեց հարյուր մեկ հազար հիսունութ) ՀՀ դրամ, պայմանագրի ապահովման գումարը՝ 3067772 (երեք միլիոն վաթսունյոթ հազար յոթ հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ, որոնք պետք է վճարվեն Բյուրեղավան համայնքապետարանի գանձապետական 900105202064 հաշվեհամարին:

Միաժամանակ հայտնում եմ, որ եթե մինչև 2024 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ապա ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ պետք է ներկայացվեն Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

Կատ՝. Վ. Մարտիրոսյան
հեռ. (0222) 6 52 03